ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի

Գավառ, Կենտրոնական հրապարակ 7

«22» «03» 2018թ.
ժ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Յուրա Մուշեղյան /ԳԱՊ/,
Հանձնաժողովի անդամներ Արմեն Զոհրաբյան /ԳԱ/, Գևորգ Խաչատրյան/ԳԱ/
ՎալերՀոդաբաշլան/ԲԱ/, Գուրգեն Մելքոնյան/ԲԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղեյան/ՄՀՄ/

ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի օրակարգ
Յուրա Մուշեղյան

1. 02.03.2018թ.-ին կասեցված ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01 ծածկագրով գնման ընթացակարգի վերսկսման մասին որոշման ընդունում:

2. Հիմք ընդունելով գնումների բողոքարկման խորհրդի ԳԲԽ-ԷՍ-2018/34 որոշումը՝ <<Օլանդա>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտը հրավերի պահանջներին համապատասխան ճանաչելու մասին որոշման ընդունում:

3. 2018 թվականի մարտի 1-ի ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01 ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից հայտարարված 28-րդ չափաբաժնով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը չեղյալ համարելու մասին որոշման ընդունում:

4. Հիմք ընդունելով պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվությունը՝ <<Սեմանգ>> ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշման ընդունում:

5. Չեղյալ համարել <<ՍԵՄԱՆԳ>> ՍՊԸ-ի, և 9-րդ չափաբաժնով՝ <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ-ի որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում:

6. <<Օլանդա>> ՍՊԸ-ին, <<Էյչ Գրուպ>> ՍՊԸ-ին և <<Տիգման Գրուպ>> ՍՊԸ-ին գների նվազեցման շուրջ բանակցությունների հրավիրելու մասին որոշման ընդունում:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում:

Գնահատող հանձնաժողովի որոշեց՝

1. <<Օլանդա>> ՍՊԸ-ի կողմից գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացրած բողոքի հիման վրա 02.03.2018թ.-ին կասեցված ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01 ծածկագրով գնման ընթացակարգը վերսկսել՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին ենթակետի պահանջներով:
Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Հիմք ընդունելով գնումների բողոքարկման խորհրդի 17.03.2018թ. ԳԲԽ-ԷՍ-2018/34 որոշումը՝ <<Օլանդա>> ՍՊԸ- հայտը համարել հրավերի պահանջներին համապատասխան:
Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Հիմք ընդունելով գնումների բողոքարկման խորհրդի ԳԲԽ-ԷՍ-2018/34 որոշումը՝ չեղյալ համարել 2018 թվականի մարտի 1-ի ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01 ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից հայտարարված գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը, քանի որ այդ որոշմամբ 28-րդ չափաբաժնով՝ (չհրկիզվող պահարան, փաստաթղթերի և այլ արժեքների պահպանման

համար) գնման ընթացակարգը հայտարարվել էր չկայացած՝ միաժամանակյա բանակցություններին մասնակիցների չներկայացել պատճառով, իսկ <<Օլանդա>> ՍՊԸ-ն չէր մասնակցել միաժամանակյա բանակցություններին այն պատճառով, որ գնահատող հանձնաժողովի 23.02.2018թ.-ի 2-րդ որոշմամբ նրա հայտը ճանաչվել էր հրավերի պահանջներին անհամապատասխան և մերժվել էր:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Հիմք ընդունելով 07.03.2018թ.-ին պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվությունը՝ և ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի, ինչպես նաև ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ կետի դրույթներով՝ մերժել <<Սեմանգ>> ՍՊԸ-ի հայտը, քանի որ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ՝ 175378(մեկ հարյուր յոթանասունհինգ հազար երեք հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Չեղյալ համարել 1-ին, 5-րդ, 8-րդ, 19-րդ, 20-րդ, 38-րդ, 42-րդ և 43-րդ չափաբաժիններով <<ՍԵՄԱՆԳ>> ՍՊԸ-ի, և 9-րդ չափաբաժնով՝ <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ-ի որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչելու մասին ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01 ծածկագրով գնահատող հանձնաժողովի 2018թ.-ի մարտի 28-ի N 3 որոշումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6. Քանի որ գնման ընթացակարգի 28-րդ չափաբաժնով՝ չիրկիզվող պահարան, փաստաթղթերի և այլ արժեքների պահպանման համար <<Օլանդա>> ՍՊԸ-ի, 43-րդ չափաբաժնով՝ կախիչներ <<Տիգման Գրուպ>> ՍՊԸ-ի և <<Էյչ Գրուպ>> ՍՊԸ-ի գնային առաջարկները գերազանցում էին տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գինը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց՝ Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ մասի բ/ ենթակետի դրույթներով՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը.

- էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակիցներին՝ 2018 թվականին մարտի 26-ին, ժամը 11-00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքի, N 205 աշխատասենյակում, կազմակերպվող գների նվազեցման շուրջ բանակցությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Գնահատող հանձնաժողով նիստ վերսկսել մասնակիցների ծանուցման հաջորդող երկրորդ աշխատանքային օրը՝ Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, Մարզպետարանի վարչական շենք, N 205 աշխատասենյակ հասցեում, ժամը 11:00-ին, ավարտը 12:00-ն:

Նախագահ՝ _____ Յու. Մուշեղյան

Անդամներ՝ _____ Ա. Զոհրաբյան

_____ Գ. Խաչատրյան

_____ Վ. Հոդաբաշյան

_____ Գ. Մելքոնյան

Քարտուղար՝ _____ Ա.Բաղեյան